

լեզուներ սովորելով՝ երբէք անուշալրութեան ու մոռացութեան չեն մատնում իրենց մարմին ու արին դարձած մայրենի լեզուն ու գրականութիւնը. Մեր գրացի վրացիք նոյն իսկ մահմեղականութիւն ընդունելուց յետոյ դարերի ընթացքում պահպանել են իրենց մայրենի լեզուն, այն ինչ Վրաստանում ապրող հայերի մեծամասնութիւնն այն աստիճանին իւրացըել է վրացերէն ու մոռացել հայերէնը որ վերջերս վրացի ազգասէրները վրացախօս հայերին անուանեցին լուսաւորչական վրացի....

Պ. Նուուի «Հնչակը» ուղղուած է թրբախօս տաճկահայերին և լի է դառն ճշմարտութիւններով. տաճկահայ գաղթականը նոյն իսկ օտարութեան մէջ (Ծկ ծովի ափերին) խօսում է տաճկերէն և մոռացութեան տալիս իւր մայրենի լեզուն. գարմանալիք բան. տաճկահայ գաղթականը ատելով ատում ու զգում է տաճկիններից, նրանց է համարում իւր գժբաղդութիւնների ու թշուառութիւնների պատճառը, բայց միևնույն ժամանակ նրանց լեզուով է խօսում շարունակ. սրտի ու մտքի այս հակասութեան պատճառը միմիայն ինքնաճանաշութեան պակասութիւնը կարող է լինել.

«Հնչակի» լեզուն ուսահայ և տաճկահայ բարբառների խառնուրդ է ներկայացնում. այս հանգամանքը հեղինակը բացատրում է նրանով, որ տաճկահայ գաղթականները հասկանան. իրեն. այդ դէպքում աւելի լաւ կլինէր, եթէ գրուած լինէր. մաքուր տաճկահայ բարբառով: Գրականութեան մէջ լեզուն. պէտք է որոշ պահանջներին բաւականութիւն տայ և կողման կի նպատակներին չպէտք է զոհուի:

ԲՐԻԶ

Ստացուած գրքեր

Նիկ. Հալայեանց. Արդարութեան նշանակութիւնը կեանք. մէջ. 1 ընդհանուր դատողութիւններ. Թիֆլիս. 1906.

Գ. 10 կ. Օրացոյց 1906 թուի ս. էջմիածին տպած. նուէր Ազգիս Վեհ.

Հայրապետից.
Հրատ. ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց.

Կ. Պոլսոյ: Արաքատունի. Բարի մայր Մարիամը. Թիֆլիս. 1905. գ. 20 կ.

Կանոնք ներսէսի Բ. կաթողիկոսի և ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի. աշխ. Արսէն Վ. Ղտտեան, արտ. Արարատից: Վաղարշապատ. 1905.

Կանոնք Պարտաւի աղդ. ժողովի (Սիովս կաթողիկոսի). աշխ. նոյնի, արտ. Արարատից. Վաղարշապատ, 1905.

Օրացոյց 1906 թ. Լոյս. ծոցի և պատի. հրատարակութիւն Եղէջ Թոփչեանի. Թիֆլիս: